Իրանական ճգնաժամը Թուրքիայի դիրքորոշման համատեքստում և հնարավոր զարգացումները

Փորձագետի մեկնաբանություն, 08.04.2026 թ.[1]

Արեստակես Ս. Սիմավորյան[2]

2026 թ. փետրվարի 28-ին Իրանի դեմ ԱՄՆ–Իսրայել համատեղ հարձակմամբ սկիզբ առած ճգնաժամը արագորեն դուրս եկավ երկկողմ դիմակայության շրջանակներից և վերաճեց լայնածավալ տարածաշրջանային հակամարտության: Իրանը պատասխան քայլերով թիրախավորեց ամերիկյան ռազմական օբյեկտները և Պարսից ծոցի երկրներում տեղակայված էներգետիկ ենթակառուցվածքները, ինչի հետևանքով Հորմուզի նեղուցում նավագնացությունը զգալիորեն սահմանափակվեց: Մարտի 18-ին վնասվեց նաև Քաթարի Ռաս Լաֆֆանի հեղուկացված բնական գազի համալիրը[3], ինչը խորացրեց գլոբալ մատակարարման շղթաների խաթարման վերաբերյալ մտահոգությունները՝ ընդգրկելով ոչ միայն նավթն ու գազը, այլև նավթաքիմիական արտադրանքը, պարարտանյութերը, ծծումբն ու հելիումը: Արդյունքում՝ ճգնաժամը վերածվեց համաշխարհային տնտեսության վրա ազդող բազմաշերտ ցնցման:

Այս ընդհանուր ֆոնի վրա Թուրքիայի համար առանձնահատուկ զգայունություն ունի քրդական գործոնը: Իրանում հնարավոր ներքին ապակայունացումը, հատկապես՝ արևմտյան քրդաբնակ շրջաններում, կարող է անմիջականորեն անդրադառնալ Թուրքիայի անվտանգությանը՝ խթանելով սահմանային անկայունությունը և զինված խմբավորումների ակտիվացումը: Նշված պայմաններում Անկարան միաժամանակ դատապարտեց ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմական գործողությունները և անընդունելի համարեց Իրանի պատասխան հարվածները երրորդ երկրների ուղղությամբ՝ կոչ անելով կողմերին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վերադառնալ դիվանագիտական հարթակ: Թուրքիայի իշխանությունները հստակեցրին նաև, որ երկիրը չի ներգրավվելու հակամարտությունում և չի միանա որևէ կողմի՝ փորձելով պահպանել իր միջնորդական դերակատարությունը:

Գործնականում Թուրքիան ձգտել է դեռևս ճգնաժամի սկզբնական փուլից խթանել ԱՄՆ–Իրան երկխոսությունը: Միևնույն ժամանակ, 2026 թ. մարտին արձանագրվեցին դեպքեր, երբ

---

[1] Մեկնաբանությունը խմբագրություն է փոխանցվել 06.04.2026 թ.-ին:

[2] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[3] Tsvetana Paraskova. Qatar to Lose $20 Billion Annual Revenue from Iranian Attacks on LNG. *OILPRICE*. 20.03.2026, https://oilprice.com/Latest-Energy-News/World-News/Qatar-to-Lose-20-Billion-Annual-Revenue-from-Iranian-Attacks-on-LNG.html (բեռնման օրը՝ 25.03.2026):

Իրանից ենթադրաբար արձակված բալիստիկ հրթիռները հատեցին Թուրքիայի օդային տարածքը և չեզոքացվեցին ՆԱՏՕ-ի հակաօդային պաշտպանության համակարգերի կողմից: Թեպետ Իրանը հերքեց Թուրքիայի դեմ ուղղված որևէ գործողություն, վերջինս պաշտոնական բողոք ներկայացրեց, իսկ ՆԱՏՕ-ն ուժեղացրեց պաշտպանական համակարգերը Ինջիրլիքի ավիաբազայի և Մալաթիա նահանգում գտնվող ռադարային կայանների շուրջ: Այս իրավիճակը ցույց տվեց, որ նույնիսկ չեզոքություն պահպանելու դեպքում Թուրքիան չի կարող ամբողջությամբ խուսափել հակամարտության հետևանքներից: Այնուամենայնիվ, Անկարայի քաղաքականությունը դժվար է բնութագրել որպես դասական չեզոքություն: Ավելի ճիշտ է ասել, որ Թուրքիան կիրառում է զգուշավոր և իրատեսական ճգնաժամի կառավարման ռազմավարություն, որի հիմնական նպատակը ռազմական ներգրավումից խուսափելն է՝ միաժամանակ պահպանելով ազգային անվտանգության առաջնահերթությունները: Անկարան հստակ ազդարարել է, որ պատրաստ է անհրաժեշտ միջոցների, եթե վտանգվի իր սահմանային անվտանգությունը:

Իրանի շուրջ զարգացող ճգնաժամը չի սահմանափակվում միայն կողմերի միջև հակամարտությամբ. այն ինչպես և կանխատեսելի էր վերածևավորում է նաև տարածաշրջանային քրդական դինամիկան[4]: Թուրքիայի համար առանցքային հարց է, թե Իրանի ներսում անկայունությունը ինչ ազդեցություն կունենա Իրանում, Իրաքում և Սիրիայում տարածված քրդական քաղաքական և ռազմական ցանցերի վրա: Թուրքիայում Քրդստանի բանվորական կուսակցության (ՔԲԿ) հետ ընթացող գործընթացը վերջին տարիներին որոշակի առաջընթաց էր արձանագրել, և 2025 թ. սկզբին դրա առաջնորդի կողմից հնչեցված զինաթափման կոչը ենթադրում էր երկարատև հակամարտության ավարտի հնարավոր նախադրյալ: Սակայն իրանական ճգնաժամն այս գործընթացը դնում է նոր անորոշությունների առաջ: Իրանի թուլացումը կարող է որոշակի քաղաքական հնարավորություններ բացել այդ երկրի քրդական ուժերի համար, որոնք արդեն իսկ փորձում են ամրապնդել իրենց դիրքերը[5] հնարավոր հետճգնաժամային վերադասավորման պայմաններում: Ներկայումս նրանք հանդես են գալիս զգուշավորությամբ և խուսափում են բացահայտորեն աջակցել արտաքին ուժերի ռազմավարությանը՝ հավանաբար նախընտրելով Իրանի իշխանությունների աստիճանական թուլացումը և ապագա ինքնավարության հնարավորությունը:

Մյուս կողմից՝ երկարատև պատերազմի պարագայում չի բացառվում քրդական ուժերի միջև միջտարածաշրջանային համակարգման խորացումը: Իրանի արևմտյան սահմաններում կառավարման թուլացումը առաջացնելու է անվտանգային վակուում, որն

[4] «Нахиджеванский инцидент» от 05.03.2026: цели и акторы. АРВАК – Армянский аналитический центр, 09.03.2026, https://arvak.am/ru/нахиджеванский-инцидент-от-05-03-2026-цели/ (բեռնման օրը՝ 25.03.2026):

[5] PJAK: “Savaştan korunmak için yerel yönetim komiteleri kuralım”; MSB: “Faaliyetlerini takip ediyoruz”. *BIANET*, 05.03.2026, https://bianet.org/haber/pjak-savastan-korunmak-icin-yerel-yonetim-komiteleri-kuralim-msb-faaliyetlerini-takip-ediyoruz-317406 (բեռնման օրը՝ 25.03.2026).

իր հերթին խթանելու է զինված խմբավորումների տեղաշարժը և վերակազմավորումը՝ հատկապես Հյուսիսային Իրաքի տարածքում, որտեղ առկա են տարբեր քրդական կազմակերպությունների և կուսակցությունների «հենակետեր»:

Այս զարգացումները անմիջական ազդեցություն կունենան Թուրքիայի ներքին անվտանգության վրա՝ ակտիվացնելով քրդական հարակից ցանցերը: Անկարայի համար սպառնալիքը ներկայումս ոչ այնքան անկախ քրդական պետության ձևավորումն է, որքան տարածաշրջանի զինված խմբերի շարժուն վերակազմակերպումը, սահմանային անկայունությունը և արտաքին դերակատարների ներգրավման աճը: Միաժամանակ, Սիրիայի հյուսիսում գործող քրդական ուժերի ապագան և դրանց ինտեգրումը ևս շարունակում են մնալ անորոշության մեջ, ինչը հավելյալ բարդություն է ստեղծում: Այս համատեքստում առավել զգայուն է նաև փախստականների նոր հոսքի հնարավորությունը: Այնպես որ, եթե Իրանում պետական կառավարման համակարգը զգալիորեն թուլանա, արդյունքում, Անկարան ստիպված է լինելու համատեղել միաժամանակ մի քանի ռիսկերի կառավարում՝ առանց դրանք վերածելու լայնամասշտաբ ներքին ճգնաժամի:

1991 և 2011 թվականներից հետո Հյուսիսային Իրաքի և Հյուսիսային Սիրիայի նախադեպերը ցույց են տալիս, որ կենտրոնական պետության վրա արտաքին ռազմական ճնշումը հաճախ ստեղծում է փաստացի ինքնավար քրդական «անկլավներ» Արևմուտքի և Իսրայելի ռազմաքաղաքական պաշտպանության ներքո: Անկարայի համար իր արևելյան սահմանին նոր քրդական «կիսապետության» ի հայտ գալը, բնականաբար, կընդունվի որպես սպառնալիք: Մասնավորապես, Թուրքիայի երկարատև առճակատումը ՔԲԿ-ի հետ և Իրանում հնարավոր քրդական քաղաքական մոբիլիզացիան՝ Անկարայի կողմից միանշանակ ընկալվելու է իբրև Իրաքյան Քրդստանն ու Սիրիայի քրդերի կողմից կառավարվող տարածքները կապող շարունակական աղեղի մի մաս:

Չմոռանանք, որ թեև Թուրքիան և Իրանը ռազմավարական մրցակիցներ են բազմաթիվ թատերաբեմերում՝ Իրաքից և Սիրիայից մինչև Հարավային Կովկաս, նրանք, այնուամենայնիվ, պատմականորեն համախմբվել են քրդական ուժերի գործողությունները կանխելու նպատակով: Հետևաբար, այս պատերազմական գործողությունների արդյունքում Իրանի աստիճանական թուլացումը Անկարային զրկում է այն համախոհ գործընկերոջից, որի հետ հնարավոր էր չեզոքացնել քրդական զինված գործողությունները: Այսպիսով, պարադոքսալ կերպով, Թուրքիան կհայտնվի այնպիսի իրավիճակում, երբ Իրանի հնարավոր պարտությունը կամ երկարաժամկետ անկայունացումն ավելի շատ կխաթարի քրդական հարցում Թեհրանի հետ ունեցած Անկարայի անվտանգային շահերը:

Ի դեպ, ԱՄՆ-ի և Իսրայելի զինված ուժերի կողմից Իրանի դեմ փետրվարի 28-ին սկսված ռազմական գործողություններից դեռևս մեկ շաբաթ առաջ Իրանի վարչակարգի ապագայի շուրջ ակտիվացած քննարկումների հետևանքներում Հյուսիսարևմտյան Իրանի հինգ առաջատար քրդական կուսակցություններ ձևավորեցին կոալիցիա՝

«Իրանական Քրդստանի քաղաքական ուժերի դաշինք» անվանմամբ: Դաշինքը տարածեց հայտարարություն, որում ընդգծվում էր *«Թեհրանի ռեժիմի ճնշող քաղաքականության»* դեմ դիմադրությունը՝ շեշտադրելով հետևյալ հիմնական պահանջներն ու նպատակները.

- Քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը՝ հիմնված նրանց քաղաքական կամքի վրա:
- Ռոժհիլաթայում[6] ժողովրդավարական, բազմակարծիք և մարդակենտրոն վարչական համակարգի հաստատում:
- Իրանում բռնապետության վերացում և կառավարման աշխարհիկ, ժողովրդավարական և դաշնային մոդելի հաստատում, որը երաշխավորում է բոլոր էթնիկ և կրոնական խմբերի իրավունքները:
- Կանանց իրավունքների լիակատար պաշտպանություն, սոցիալական արդարության ապահովում և շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականության ներառում կառավարման սկզբունքներում:
- Համատեղ ընդդիմադիր ճակատի ձևավորման նպատակով համագործակցություն Իրանի այլ ժողովրդավարական ընդդիմադիր ուժերի հետ՝ «*բռնապետությունը մերժելու*» հիման վրա[7]:

«Համատեղ ընդդիմադիր ճակատի» ձևավորման շեշտադրումը ցույց է տալիս, որ քրդական ուժերը չեն սահմանափակվում տարածքային ինքնավարության հարցով, այլ ձգտում են ներգրավվել Իրանի հնարավոր վարչակարգի փոփոխության գործընթացում՝ հանդես գալով որպես համապետական խաղացող: Սա նրանց դիրքավորում է ապագա քաղաքական վերածնումների բանակցային սեղանի շուրջ սեփական տեղն ապահովելու համար: Արևմտյան դերակատարների հնարավոր աջակցությունն իր հերթին էապես կբարձրացնի այս կոալիցիայի քաղաքական կշիռը, մինչդեռ Թուրքիան հակված է լինելու սահմանափակել դրա ազդեցությունը՝ քրդական գործոնի տարածումը կանխարգելելու նպատակով: Հենց այս հակադիր վեկտորների բախումն էլ կարող է «քրդական հարցը» վերածել տարածաշրջանային դիմակայության բաղադրիչի: Այնուամենայնիվ, դաշինքի իրական ազդեցությունը կախված է լինելու երեք հիմնական գործոնից՝ Իրանում կենտրոնական իշխանության կայունությունից, ընդդիմադիր դաշտի համախմբման մակարդակից և արտաքին ուժերի վերաբերմունքից: Այս հարցադրումը պահանջում է առանձին վերլուծական մոտեցում:

Այլընտրանքային և վիճահարույց վարկածը, որն առաջ ենք քաշում հոդվածում, վերաբերում է Թուրքիայի կողմից հակամարտության հնարավոր գործիքավորմանը՝ կապված թյուրքախոսներով բնակեցված իրանական շրջանների հետ: Ինչպես հայտնի է, Հյուսիսարևմտյան Իրանում, ներառյալ՝ Արևելյան և Արևմտյան Ատրպատականի

[6] Իրանական Քուրդիստանի կամ Արևելյան Քուրդիստանի ոչ պաշտոնական անվանումն է:

[7] İran'da Kürt kimliği: Kim kimdir? *BIANET*, 05.03.2026, https://bianet.org/haber/iranda-kurt-kimligi-kim-kimdir-317349 (բեռնման օրը՝ 25.03.2026).

նահանգներում բնակվում են զգալի թվով թյուրքախոս իրանցիներ և Իրանի պետության մասնատման դեպքում մրցակցող արտաքին ուժերը կարող են փորձել օգտագործել այս գործոնը: Անկարայի համար, որը Թյուրքական պետությունների կազմակերպության շրջանակներում ձևավորել է ագրեսիվ պանթյուրքական պատումներ, Իրանի տարածքային ամբողջականության խաթարումը կարող է ընկալվել որպես հնարավորություն իր նվաճողական քաղաքականության առաջխաղացման համար:

Բայց արդյո՞ք Անկարան կգնա նման արկածախնդրության: Այդ ուղղությամբ ցանկացած գործողություն Իրանի կողմից կարժանանա ասիմետրիկ հակահարվածի, այդ թվում՝ հրթիռային հարվածների: Ավելին, Իրանի տարածքային մասնատման սցենարի դեպքում արտաքին ուժերի բացահայտ աջակցությունը կհակասի Իրանի տարածքային ամբողջականությունը հարգելու նրա պաշտոնական վարդապետությանը:

Այնուամենայնիվ, անուղղակի ներգրավվածությունը չի կարելի բացառել: Անկարան կարող է օգտագործել թուլացած Իրանը, որպեսզի ընդլայնի ազդեցությունը հետախուզական համագործակցության, քուրդ զինյալների դեմ անդրսահմանային գործողությունների կամ ավելի մեծ ինքնավարություն ձգտող տեղի թյուրքախոս գործիչներին քաղաքական աջակցության միջոցով և որոշ դեպքերում տվյալ գործողությունները հնարավոր է կոորդինացնի Ադրբեջանի հետ: Նման սցենարում Թուրքիայի հիմնական նպատակը պարտադիր չէ, որ լինի տարածքային բռնակցումը, այլ անվտանգության կեղծ քողի տակ «*բարենպաստ գոտու*» ստեղծումը՝ ինչպես դա իրականացվեց Սիրիայի դեպքում: Այնուամենայնիվ, այս ռազմավարությունը վտանգավոր կերպով կխճճվի քրդական ուժերի հնարավոր վերելքի հետ և, եթե հանկարծ Իրանի կենտրոնական իշխանությունը փլուզվի, քրդական խմբերը կարող են ինքնավարություն հռչակել նախքան Իրանի թուրքամետ գործիչները կկարողանան համախմբվել: Այդ դեպքում Թուրքիան կանգնելու է կրկնակի ճակատային մարտահրավերների առաջ՝ մի կողմից փորձելով զսպել քրդական տարածքայնացումը, իսկ մյուս կողմից աջակցելով տեղական թյուրքական ազգայնամոլ-անջատողական տարրերի գործողություններին, ինչը կարող է Իրանի տարածքում վերաճել քուրդ-թյուրքական ռազմական բախումների:

Այս պահի դրությամբ, այնուամենայնիվ, Անկարան անվտանգության տեսանկյունից առաջնային խնդիր է դրել խուսափել հակամարտության մեջ ներքաշվելուց՝ միաժամանակ կանխելով դրա ազդեցությունն երկրի ներսում: Հրթիռային միջադեպերը ցույց տվեցին, որ Թուրքիան այլևս չի կարող դիտարկել այս ճգնաժամն իբրև զուտ արտաքին զարգացում: Նրա տարածքում տեղակայված ռազմավարական բազաները, հատկապես՝ ՆԱՏՕ-ի ենթակառուցվածքները, օբյեկտիվորեն ընկալվում են իբրև հակամարտության մաս: Միևնույն ժամանակ դիվանագիտական հարթակներում Անկարան ձգտում է պահպանել հավասարակշռություն, սակայն այդ դիրքորոշումը պահելը պահանջում է մշտական մանևրում՝ հատկապես արտաքին քաղաքական ճնշումների պայմաններում:

Տնտեսական տեսանկյունից բացասական հետևանքները նույնպես անխուսափելի են: Հորմուզի նեղուցի շուրջ իրավիճակը և էներգակիրների գնաճը նախ ազդելու է Թուրքիայի որոշ ապրանքների թանկացման և լոգիստիկ ծախսերի բարձրացման վրա: Հատկապես խոցելի են այն ոլորտները, որոնք կախված են տարածաշրջանային արտահանումից՝ սննդամթերքից, գյուղատնտեսական նշանակության ապրանքներից և վերամշակված արտադրանքից:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի հետագա քայլերը մեծապես կախված են լինելու նրանից, թե որքան խորն ու երկարատև կլինի Իրանի շուրջ ձևավորված ճգնաժամը, և թե ինչպիսի նոր ուժային կոնֆիգուրացիա կձևավորվի տարածաշրջանում: Անկախ այս ամենից, ակնհայտ է, որ Անկարան այսուհետ ստիպված է զուգահեռաբար ամրապնդել իր սահմանային և օդային պաշտպանությունը, վերահսկել քրդական գործոնի հետ կապված հնարավոր զարգացումները և բարձրացնել իր տնտեսական դիմադրողականությունը՝ շարունակվող անորոշության պայմաններում: